

ՀՐԱՆՈՒՇ ՉԱՔՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու
Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ
hmardoyan71@mail.ru

ԿՐԿՆԱՍԵՌ ԲԱՅԵՐԻ ԳՐԱԲԱՐՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Կրկնասերությունը բայի իմաստային կառուցվածքում քերականական տարբեր սեռերի նշանակությունների համատեղումն է՝ առանց բառական-քերականական լրացուցիչ փոփոխությունների¹: Այն բնորոշ է հայերենի բայական համակարգին պատմական զարգացման բոլոր շրջաններում²:

Հին հայերենն ունի շուրջ 500 կրկնասեր բայեր, բայերի կեսից ավելին, ինչպես վկայում է միջինհայերենյան մի շարք բնագրային աղբյուրների ուսումնասիրությունը, շարունակում է գործածվել նաև միջին հայերենում, ընդ որում շուրջ 200 բայեր՝ առանց ձևաիմաստային փոփոխություններ կրելու, իսկ մի քանի տասնյակ բայեր՝ ձևի կամ իմաստային կառուցվածքի որոշակի փոփոխություններով³:

Գրաբարի համեմատությամբ բայերի կրած *ձևային փոփոխությունները* սովորաբար դրսևորվում են գրաբարյան բառերի տարբերակներով՝ միջին հայերենին բնորոշ հնչյունափոխությամբ, կարող են արտահայտվել նաև լծորդի և բայի կազմության, ինչպես նաև հնչյունական մասնակի փոփոխություններով:

Բառիմաստային փոփոխությունները բնութագրվում են իմաստային նոր առումներով:

Միջին հայերենում գրաբարի կրկնասեր բայերի ձևաիմաստային փոփոխության դրսևորումները հիմնականում հանգում են հետևյալին.

ա) *Գրաբարի կրկնասեր բայերը ձևով փոփոխվել են, բայց պահպանել են նույն իմաստները*:

բ) *Գրաբարի բայերը փոխել են և՛ ձևը, և՛ իմաստային կառուցվածքը*:

գ) *Գրաբարի բայերը ձևով մնացել են նույնը, բայց ձեռք են բերել նոր նշանակություն(ներ)*:

Անդրադառնալով խնդրո առարկա բայերի քննությանը՝ սկսելով առաջին ենթախմբից:

¹ Աբրահամյան Ա., 1962, 672:

² Արդի հայ քերականագիտության մեջ կրկնասերությունը կապվում է ներգործական և չեզոք սեռերի նշանակությունների համատեղման հետ, քանի որ մեր լեզվի այս շրջանում առանց բայի լրացուցիչ փոփոխությունների կարող են համատեղվել ներգործական և չեզոք սեռերը (տե՛ս Աբրահամյան Ա., 720), թեև որոշ ուսումնասիրողներ ընդունում են նաև կր, չք կրկնասերությունը:

³ Միջին հայերենի բառարանում, 2009, որի համար հիմք են ծառայել 12–16-րդ և մասամբ 17-րդ դարերում գրի առնված բոլոր կարգի տպագիր և անտիպ գործերը, հիշատակվում են շուրջ 30 կրկնասեր բայեր, ինչից հետևում է, որ միջինհայերենյան կրկնասեր բայերի ընդհանուր թիվը հասնում է մոտ 300-ի:

Անյուսանալ և **երկիրպագանել** բայերը միջին հայերենում պահպանել են կրկնասեռությունը և իմաստային նույն կառուցվածքը, բայց կրել են ձևի փոփոխություն. գրաբարում **անյուսանալ** կրկնասեռ բայը ունի նր՝ *անհուսալի համարել* և չր՝ *հուսահատվել* նշանակությունները: Միջին հայերենում հանդիպում է բայի ե լծորդության պարզ տարբերակը, հմմտ. **անյուսել**- նր-հուսահատեցնել. *Գայ սատանայ և սկսի անյուսել քեզ ի մեղս (ՄՀԲ, 60), անյուսիլ*⁴- չր- հուսահատվել. *Մի՛ անյուսիր, ո՛վ ողորմելի (ԳՏՈ, 209):*

Երկիրպագանել բայը պահպանել է գրաբարյան *սաշտել, երկրպագություն մատուցել* նր, չր նշանակությունները, բայց ներկայանում է **երկիրպագել, երկրպագել** բառատարբերակներով. *Ըստողծողին տաքոք զփառս և երկրպագեմք խաչին նորա (ՄՀԲ, 270): Ընդ աջմէ հոր նստան և երկրպագեցին նմա (ԳՏՈ, 179):*

Սգալ, օգտել, սովորել և **բրդել** կրկնասեռ բայերը կրել են հնչյունական մասնակի փոփոխություններ՝ **սքալ օկտել/իլ, սովրիլ, բրտել**⁵.

Գրաբարյան բառերի հնչյունափոխված ձևերը, որոնք դարձել են միջին գրական հայերենի սեփականությունը, ամենայն հավանականությամբ, խիստ կենսունակ են եղել և՛ ժամանակի ժողովրդախոսակցական լեզվում, և՛ բարբառներում, բայց գրական լեզվին սովորաբար չեն փոխանցվել:

Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում և զգալի թիվ են կազմում այն կրկնասեռ բայերը, որոնք միջին հայերենում կրել են ոչ միայն ձևի, այլև իմաստային կառուցվածքի փոփոխություն, օրինակ՝ **հոտոտալ** բայը պահպանել է կրկնասեռությունը, բայց կորցրել չեզոք սեռի *մոտենալ, դիպչել* նշանակությունները, կրել է նաև լծորդի փոփոխություն, հմմտ. **հոտոտալ**-նր, չր-*հոտոտել, հոտ քաշել*. *Երբ մարդն ի յինքն հոտոտայր, նայ հոտն զայր մուշկ ու ամբար: Քանի զնա կու հոտոտայր, սիրոյն լինէր խև ու խումար, հոտվրալ. Թէ զծաղիկն հոտվրաւ, զրդեղան կաղուածն բանայ, հոտտալ. Երբ հոտտան, նայ հոտած հոտ զայ (ՄՀԲ, 436):*

Ընդգծենք մի կարևոր հանգամանք. եթե գրաբարի կրկնասեռ բայերը սովորաբար բազմիմաստ են և անգամ կարող են համատեղել գոնե արդի լեզվամտածողությամբ անհամատեղելի նշանակություններ, ապա ձևապես միջինհայերենյան դիտվող տարբերակները լեզվի զարգացման տվյալ փուլում այլևս չունեն իմաստային լայն ընդգրկումներ, ընդհանուր առմամբ գործածվում են նախկին իմաստների զգալի սահմանափակմամբ: Այս կարգի բայերում սովորաբար պահպանվում են գրաբարյան բազմիմաստ բայերի առաջնային, ուղղակի իմաստները, իսկ երկրորդական նշանակությունները դրսևորվում են խիստ հազվադեպ, օրինակ՝ **հաւասարել** կրկնասեռ բայը գրաբարում ունի նր-1. *Հախասար դարձնել, հաւխասարեցնել, նմանեցնել*, 2. *Մասնակից, կցորդ դարձնել*, չր-1. *Հախասար դառնալ, հաւխասարվել, նմանվել*, 2. *Համեմատել, բաղդատվել*, 3. *Մասնակից, կցորդ լինել, ձայնա-*

⁴ Ինչպես գիտենք, գրաբարում քերականական նպատակներով կատարվող *և-ի* լծորդափոխության նշանակությունը միջին հայերենում փոխվում է. *ի* լծորդը սկսում է գործադրվել նաև սեռի փոփոխություն առաջ բերելու նպատակով՝ ներգործականի և կրավորականի հանդեպ արտահայտելով նաև միջին նշանակություն (*Տե՛ս Աբրահամյան Ա.*, 306):

⁵ ...*ն. օկտել զայր: Ով կարդայր և օկտիր ի տուր յարօթս ձեր (ՄՀԲ, 823): Վայ ձեզ որ ծիծաղիր, զի սքազեր և յագեր (ՄՀԲ, 722): Որ գրատուն սուրի առաւել վասն նետեղոյ (ՄՀԲ, 709): Բրտեալ զհաց, զի եմ քաղցած (ՄՀԲ, 129) և այլն:*

կից լինել նշանակությունները (ՆՀԲ, 75, ԳԲ, 743): **Հասարեկ** միջինհայերենյան տարբերակի նշանակություններն են՝ նր-հախասարեցնել, Գլխուն գիճույթիւն տայ և մագն հասարե (ՄՀԲ, 420), **հասարիլ**-չր-հախասարվել, հախասարապես տարածվել, Ելնէ երրնդնի ի գրաստուն երեսն ու ի բազկունքն և սպա **հասարի** ի յամէն մարմինն (ՄՀԲ, 412):

Ծաղեկ կրկնասեռ բայը ևս գրաբարում բազմիմաստ է. նր-1. Պատեղ, պարուրեղ, 2. Կապեղ, կապկպեղ, 3. Փայթաթեղ, որորեղ, 4. Շաղախեղ, 5. չր. Փայթաթվեղ, որորվեղ, 6. Կապվեղ, միակցվեղ, կաշկանդվեղ, 7. Մխրնվեղ (ՆՀԲ, 461, ԳԲ, 305): **Ծաղղեղ** բայի հասկացության ծավալը նեղացել է. նր-շաղախեղ. **Շաղղեղ**՝ ջրով ու շինէ՝ խորաներ շաղղիլ-չր-շաղախվել. Լկաւ ա՛ռ աղ և խառնես ի հողն ափ մի մանր, որ **շաղղիլ** յիրար (ՄՀԲ, 586)⁶:

Արծակել կրկնասեռ բայի գրաբարյան նշանակություններն են նր-1. Կապերը քանդել, արծակել, բաց թողնել, ներել, 2. Թողնել, թույլ տալ, 3. Ուղղել, ուղարկել, 4. Չգել, նետել, 5. Բաց անել, դուրս հանել, բուսցնել, 6. Տարածել, ափռել, բարձրացնել, չր- Արծակվել (ՆՀԲ, 2235, ԳԲ, 215): Միջին հայերենում բայի նր նշանակություններն արտահայտվում են **արծկել** բայով՝ թողնել. Լյսօր **արծկէ՛**՝ զհանգուցդ մինչ ես ի կեղդանություն (ՄՀԲ, 91), իսկ չր- տարածվել նշանակությունը՝ հնչյունական տարբերություններ ունեցող **արծկնալ** (Քանի եղթայ՝ նա անէ և **արծկնալ**), **արծկենալ** (Նա ուժովնայ երակն և **արծկենալ**), **արծակնալ** (Լյս լուսամուտս ժամ կայ **արծակնալ**, և ժամ կայ որ նեղնայ), **արծականալ** (**Արծականալ** գաղտ շնչահանքն) բառային տարբերակներով (ՄՀԲ, 91):

Չեզոք և ներգործական սեռի նշանակությունները միջին հայերենում ձևալին տարբերակներով է արտահայտում նաև **ճապաղել** կրկնասեռ բայը՝ **ճապղիլ**՝ չր ծախլվել, տարածվել. Որ **ճապղիլ** յամէն մարմինն (ՄՀԲ, 470), նր՝ **ճապաղգել**⁷ տարածել, ափռել. ՉԱրտաշէսէ, զհարսանեսց նորին, **զճապաղգելոյն** զդահեկանս, արքային ի դուռն տասանարին (Ստ. Ռօշքայ, 15):

Իմաստափոխությունը, ըստ էության, արտահայտվում է գրաբարյան բառերի բազմիմաստության վերացմամբ, այսինքն՝ տեղի է ունենում իմաստների սահմանափակում՝ կապված հիմնական իմաստի պահպանման, երկրորդական և փոխաբերական նշանակությունների վերացման հետ:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բայերի ինչպես գրաբարյան, այնպես էլ միջինհայերենյան տարբերակները կրկնասեռ են: Բայց բազմաթիվ դեպքերում միջինհայերենյան նորակազմությունը արդեն կրկնասեռ չէ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրկնասեռության չեզոքացում ապրած նորակազմության կողքին հիմնականում շարունակում են գործածվել նաև բայերի գրաբարյան կրկնասեռ տարբերակները, կարելի է ասել՝ միջին հայերենում Ֆհանդիպում՝ են լեզվական հին և նոր ձևերը, որոնք, ըստ լեզվի զարգացման

⁶ Հանդիպում է նաև **շաղվել** ներգործական սեռի բայը՝ **շաղախել** նշանակությամբ. **Չամէնն աղա՛** և **մաղէ՛**՝ զառնաղեզվի ջրով **շաղվէ** (ՄՀԲ, 586):

⁷ Տե՛ս **Պողոսյան Ն.**, 2012, 130:

ներքին օրինաչափությունների, մրցակցում են, արդյունքում (ինչպես ցույց է տալիս տարժամանակյա քննությունը)՝ կենսունակությունը սովորաբար պահպանում է կրկնաստեղծության չեզոքացում ապրած տարբերակը⁸:

Օրինակ՝ **վայելել** բայը գրաբարում բազմիմաստ է. նր. չր- 1. *Ստեղծած բարիքը հաճույքով օգտագործել*, 2. *Որևէ կարգի հաճույք ստանալ*, 3. *Հանելի կյանք վարել, բավականության մեջ գտնվել, փափկանալ*, 4. *Հաղորդակից, մասնակից լինել վայելքին* (ՆՀԲ, 776, ԳԲ, 497): Միջինհայերենյան **վայլել** տարբերակն ունի միայն որևէ հաճույք ստանալ, օգտվել մի բանից նր նշանակությունները՝ *Եղբ'այր, տղա եմ զենեհար, դեռ չեմ վայլեր գայս աստրտորս* (ՄՀԲ, 727):

Միջին հայերենում գործածվող **հատանել** կրկնաստե բայի կողքին գործածության մեջ է մտնում ի լծորդության չեզոք սեռի **հատնիլ** տարբերակը՝ *սպառնվել, վերջանալ* նշանակություններով⁹. *Հատնի և մնա պինդ մեջսն ու անուշնա շունչն* (ՄՀԲ, 413):

Հեղձանել կրկնաստե բային գուգահեռ գործածվում է վերջինիս չեզոք սեռի պարզ տարբերակը՝ **հեղձկիմ**՝ *խեղդվել, խեղդամահ լինել. Վարանեալ, նեղեալ և հեղձկեալ, մղձկեալ ի խորհուրդ պոտիս* (ՄՀԲ, 422):

Թքանել կրկնաստե բայի (նր-արիամարիանքով մերժել. *Ճողեր գմուրսն և թքանելը* (ՄԳ Ա, 49), չր- թուքը դուրս նետել *Պեղծ բերանով թքանելին* Յայն որ թքով լոյս ետ կուրին (ՆՇՄ, 943)) **թքնել** տարբերակը ունի միայն ներգործական սեռի իմաստ. *Օգոտ հագին և արիւն թքնելուն* (ՄՀԲ, 255)¹⁰ և այլն:

Որոշ դեպքերում գրաբարի կրկնաստե բայերը ձևով մնացել են նույնը, բայց ենթարկվել են իմաստափոխության, օրինակ՝ **կարդալ** բայը գրաբարում բազմիմաստ կրկնաստե բայ է՝ հետևյալ իմաստներով՝ 1. *Չայնել, գոչել, աղաղակել*, 2. *Չայն տալ, կանչել, հրավիրել*, 3. *Անունը տալ, անվանել, հորջորջել*, 4. *Բարձրաձայն կարդալ*, 5. *Ընթերցել* (ՆՀԲ, 1067, ԳԲ, 639): Միջին հայերենի բառարանում հիշատակվող **կարդալ** բայը նր է՝ *սովորել, ուսանել* նշանակություններով (ՄՀԲ, 364). *Այնոր համար որ ի փարպետե չէ կարդացել, և թէ կարդացել է՝ նա չէ հասկցեր* (ՄՀԲ, 364): Չուգահեռ գործածություն ունի նաև բայի մեկ այլ ձևային տարբերակ՝ **կարդել**, դարձյալ որպես նր՝ *կարդալ, ընթերցել* իմաստներով. *Ով կարդէք, յաղօթս յիշեցէք*: Չնայած միջին հայերենում բայը հանդիպում է ոչ միայն նր-ընթերցել. (Եւ յորժամ կարդացին զթուղթն, հատին զգուխն), այլ նաև չր-ձայն տալ, *կանչել* գրաբարյան նշանակություններով (Մի անտես առներ վասն որոյ հանդերձեալ եմ կարդալ առ քեզ: Աղաղակաւ առ Աստուած կարդային ի տուէ և ի զիշերի (ՄՀԲ, 364)),

⁸ Կարևոր է նշել, որ արդի հայերենի բառապաշար սովորաբար մուտք են գործում բայերի գրաբարյան ձևային տարբերակները, օրինակ՝ *վայելել* բայը գրաբարում կրկնաստե է, *վայլել*՝ միջինհայերենյան տարբերակը՝ նր, արդի հայերենում ունենք *վայելել* բայը՝ որպես նր:

⁹ Ի դեպ, նշված բայիմաստները կային նաև գրաբարում՝ բայի ածանցավոր տարբերակում, որը ուներ նաև 18 այլ նշանակություններ՝ *անջատել, պատռել, փորել, վնոել, դաքարել* և այլն (ՆՀԲ, 2235, ԳԲ, 46):

¹⁰ Նկատենք, որ բայը լծորդական, ինչպես նաև պարզ և ածանցավոր կազմությամբ տարբերակներ, այսինքն՝ փոխանցումներ ունի նաև հին հայերենում, մասնավորապես՝ *թքնուլ* (նր, չր), *թքել* (նր, չր), *թքթքել* (չր) (տե՛ս ՆՀԲ, 824, ԳԲ, 497):

ակնհայտ է իմաստային տեղաշարժը. գրաբարի համար առաջնային նշանակություններն իրենց տեղը զիջել են երկրորդական համարվող իմաստներին՝ հետագայում բոլորովին մոռացության մատնվելով:

Գրաբարյան կրկնասեռ բայերի միջինհայերենյան որոշ տարբերակներ, բառիմաստի ընդլայնման երևույթով պայմանավորված, երբեմն գուգահեռաբար ձեռք են բերել նոր իմաստ(ներ), ինչպես **խռովել** բայը, որը թեև շարունակում է գործածվել գրաբարյան նշանակություններով, այն է՝ նր-հուզել. *և խռովէ զհաղադացեալ ոգին (ԳՏԶԱ, 31)*, չք- հուզվել, ավելոծվել. *Իմ ես՛ր, քեզ վատ չեմ ասեր, որո հիմի է՛ր ես խռովելը (ՆԶ, 43)*, միջին հայերենում ունի նաև չեզոք սեռի *նեղանալ*, *մեկի հետ չհոսել* նոր նշանակությունը. *Այբէն մինչև ի քէն զանկատ անեմ ես, Բարև յէ՛ր չես ի տար, սուտ խռովելը ես: Միտտ իմ, ընդէ՛ր ես խռովել (ՄՀԲ, 336)*:

Ինչպես նշեցինք, և լծորդության որոշ կրկնասեռ բայեր միջին հայերենում ունեն լծորդական տարբերակներ, օրինակ՝ **բխել**¹¹ կրկնասեռ բայի կողքին միջին հայերենում գործածվում է նաև **բխալ-չք** (*Մէջէն պաղ աղբյուր կու բխալ (ՄՀԲ, 120)*), **փայլել** բայի կողքին՝ **փայլալ-չք**-փայլել (*Դու արա ինձ մոտիկ, թէ ոնց կու փայլալ (ՄՀԲ, 779)*), **շնչել** բայի կողքին՝ **շնչալ-չք**-շնչել, (փչել. *Շնչայ ուժով և լինի փորն մեծ Երբ որ հարաւ քամին շնչայր, իր ձագերուն սա մահ կու տայր (ՄՀԲ, 841, 599)*) տարբերակները, որոնք, շատ դեպքերում պայմանավորված լինելով հեղինակի ոճական ինքնատիպությամբ, երբեմն՝ հանգավորմամբ կամ ուղղակի վրիպակով, հետագայում տարածում չեն գտել:

7–10-րդ դարերում, ինչպես գիտենք, մի շարք ածանցավոր բայերին գուգահեռ սկսել են գործածվել նրանց ածանցագուրկ ձևերը, ինչպես՝ *տարածանել-տարածել*, *հատանել-հատել* և այլն: Միջին հայերենում դիտվում է նաև հակառակ երևույթը. պարզ բայերի կողքին (թե՛ համադրական, թե՛ սեռային գուգահեռությամբ արտահայտվող կրկնասեռություն ունեցող) սկսում են գործածվել բաղադրության ածանցով տարբերակներ, որոնք որոշ դեպքերում ունեն նաև այլ լծորդ, ինչպես՝ **վառել - վառենալ**, **հաճել - հաճենալ**, **հաշտել - հաշտենալ**¹² **պնդել-պնդանալ** և այլն. *Այն մարդն, որ մեղայ չատաց, ի հրոյն մէջն վառենալ (ՄՀԲ, 730)*, *Երբ հաշտենաւ ընդ ընկերիդ (ՄՀԲ, 841)* Որ պարզ երեսօք երթանք առ աստուած հանց որ հաճենալ (ՄՀԲ, 841) և այլն: Առավել կարևոր է, որ, միջինհայերենյան ածանցավոր նորակազմությունները ունեն քերականական մեկ սեռ¹³:

¹¹ **Բխել**-նր-բխեցնել. *Բղխեացէ սիրտ իմ զքան բարի (ԳՏՈ, 106)*, չք- դուրս հոսել, թափվել. *և աղբիւր ի բերանոյ նորա բխել (ՄԳ Ա, 152)*: **Փայլել**-նր- փայլեցնել. *և փոխանակ մանկաց գտորն փայլեալ ՚ի պարսնոցսն ընդունէին (Արծր., 191)*, չք- շողալ. *Փետուրք նորա փայլեն որպէս զաստեղս (ՄՀԲ, 75)* և այլն:

¹² Հայտնի է, որ –են- ածանցով բայերը գրաբարում մեծ թիվ չէին կազմում և գործածության մեծ հաճախականություն չունեին՝ ի տարբերություն միջին հայերենի. այս շրջանում հիշյալ ածանցը շատ արտադրողական է (*տե՛ս Աբրահամյան Ա., 243*):

Ի տարբերություն միջինհայերենյան՝ լծորդական փոփոխակներով ներկայացող պարզ տարբերակների՝ որոշ ածանցավոր նորակազմություններ հայերենում ստանում են քաղաքացիության իրավունք՝ շարունակելով գործածվել կազմությամբ պարզ նույնարմատ բայերի կողքին, հաճախ ձեռք բերելով նաև նոր նշանակություններ, ինչպես օրինակ՝ *հաճենալ*, *պնդանալ* բայերը:

¹³ Որոշ դեպքերում թե՛ պարզ, թե՛ ածանցավոր բայերը ներկայանում են հնչյունական տարբերակներով, ինչպես **պնդել- պնդանալ** բայերի դեպքում. **պնտել**-նր-պնդացնել, ամրացնել. *Նեղն ուզէ որ թոյցնէ և բնոյթինն ուզէ որ պնտէ*, չք-ամրանալ, կարծրանալ-*Չեղդ շան միս ժանգոտել է և*

Շարունակները քննությունը՝ անդրադառնալով գրաբարում սեռային գուգահեռություն ունեցող բայերին:

Սատակել կրկնասեռ բային գուգահեռ (նր-սպանել. *հարեալ սատակեցին զնա* (Արծր., 108), չր-սպանվել, մեռնել. *Իսկ Վաղէս կայսր չարամահ սատակեցաւ* (ԿԳՊ, 22)) գործածություն ունի **սատկիլ** (մեռնել (կենդանիների մասին)) չեզոք սեռի բայը. *Նա պիտի խլի ի տեղացն և սատկի* (ՄՀԲ, 689)): **Խորովել** կրկնասեռ բայը գործածվում է **խորվել** ներգործական սեռի բայի հետ, որն ունի *առանց ջրի եփել* նշանակությունը. *Ա՛ն հին խոզմիս ու խորվէ՛ր ընդ դէմ կրակին* (ՄՀԲ, 331), **վճարել** կրկնասեռ բայը՝ **վճառել**՝ նր տարբերակի հետ՝ *վճար տալ* նշանակությամբ. *Ու երբ վճառէ, յայնժամ ազատէ զիր տունն ի Յակոբէն* (ՄՀԲ, 740), **հնազանդել** և **սողոսկել** բայերը՝ *ի լծորդով տարբերակների հետ (հնազանդիլ, սողոսկիլ)՝ հնազանդվել և սողոսկել* նշանակություններով. *Չի նա հրամայեաց զմեր հնազանդեալ և զմեր սիրով կալեալ* (ՄՀԲ, 432): ...և *սողորկին յայն կրօնքն, հերետիկոս եղ* (ՄՀԲ, 709), **հաւնենալ** ներգործական սեռի բայը՝ **հաւանել** կրկնասեռ բային գուգահեռ՝ *հաւանեցնել* նշանակությամբ. *Չոր եղծե հաւնեալ բան Սրոջինսրիյին* (ՄՀԲ, 412)¹⁴ և այլն:

Աղաչել և **բաղբաջել** ասացական բայերը գրաբարում կրկնասեռ են՝ նր-թա-խանձագին խնդրել, չր-աղոթել և նր-փուշ բանել ասել, չր-շաղակրատել նշանակությունները նշանակություններով: Միջին հայերենի բառարանում հիշատակվում են որպես չեզոք սեռի բայեր՝ **աղչել** և **բաղբանջել** ձևերով. *և նա աղաչէր և ասէր* (ՄԳ Ա, 142): *Այժմ աղաչես ի յատենին* (ՀՂԲ, 165)¹⁵: *Նստին ի փողոցի և բաղբանջեն լեզուս իրեանց* (ՄՀԲ, 107):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս բայերը կրկնասեռ են նաև արդի հայերենում, մենք ավելի քան վստահ ենք, որ վերջիններս այդ հատկանիշը պահպանել են նաև միջին հայերենում: Հնարավոր է՝ միջինհայերենյան որևէ բնագրում **աղչել** և **բաղբանջել** բայերը գործածված են նաև քերականական երկրորդ սեռով, այլապես քիչ հավանական է, որ բայը միջին հայերենում կորցնի, իսկ արդի հայերենում նորից ձեռք բերի գրաբարյան կրկնասեռությունը: Նույնը պետք է ասել *հաջողել* և *երկարել* բայերի մասին:

պնտել, պնդնալ-չր-Այից աղբորն աղտ և նայիտ կու ժողվի և կու պնդնալ, *պնտանալ*-չր-պնդանալ, կապվել (փորի մասին). *Լինի...տքնույթին, և պնտանալ փորույն* (ՄՀԲ, 658):

¹⁴ **Խորովել** - նր-առանց կրակի եփել. *Այր մի աղբատ խորովել միս սակաւ յանապատին իւրում* (Աղուէս., 86), չր- տանջվել. *Այրին և խորովին առ սէր ընկցն* (Սարգ., ՆՀԲ): **Վճարել**-նր-հատուցել. *Նա եմուտ 'ի նմա վճարեաց զիր պետուն* (Աղուէս., 80), ավարտել. *Չի գործ ծածուկ մեքենային փոյթ և արագ վրճարեացին* (ՆՇՍՄ, 67), չր-ավարտվել, վերջանալ. *Գինի մի՛ տուր և ոչ ծանր կերակուր, մինչև վճարի ջերմն* (ՄՀՋՄ, 28): **Հնազանդել**-նր-հնազանդեցնել, ընկճել. *զանենեսեսն հնազանդելը ընդ լծով ծառայութեան* (ՊՅԿ, 97), չր-հնազանդվել. *Որդիք ոչ հնազանդին ծնողաց իրեանց...* (ՄԳ Դ, 104): **Սողոսկել**-նր-մտցնել. *Ճարտարութեամբ բանին սողոսկէ զմիտս յտղացն* (Լամբ., ՆՀԲ), չր-սողոսկելով ներս մտնել. *մինչ զի 'ի պատուտղացն ձեռանէ սողոսկեալ՝ անկանիմ յերկիր* (ՄԳ Ա, 43): **Հավանել**- նր, չր -անալ, ականջ դնել, հոժարել. *Եւ ասէ 'ի մարդն այն, թե հաւանիս ինձ* (Աղուէս., 117): *Եւ այնմ ևս հաւանեալ ետ նմա հազար ևս դահեկան* (Աղուէս., 31):

¹⁵ *Եւ աղաչէր զնա զի փարթամացուցէ զնա* (ՀՄՊՏ, 5): *Եւ թէ որ աղաչէ զնսա զի մի վնասեցնեմ* (ԳՏՈ, 34): *Վասն զի լսեմք՝ զորս բաղբաջէր սնտոի օրինակաւ* (ՊՏԹ, 153): *Հոգին Քրիստոսի չէ աստուած, որպէս նորս բաղբաջեն* (ԳՏԳՀ, 91):

Յաջողել գրաբարում կրկնասեռ բայը նույն նշանակություններով շարունակում է գործածվել նաև միջին հայերենում. նր-հաջողեցնել. *Թերևս յաջողեացէ Աստուած 'ի ձեռն նոցա զգործ պատերազմին յաղթութեամբ (Արծր., 316), չր- հաջողություն ունենալ. Եւ այց արար տէր նոցա, և յաջողեաց 'ի բարությանս (ՊՅԿ, 96):* Չուգահեռ գործածություն ունի նաև միայն չեզոք սեռի նշանակություններ (հաջողվել, իրագործվել) ունեցող **աջողիլ** տարբերակը. *Չի աջողեացի գործ նորս (ՄՀԲ, 74):*

Յերկարել¹⁶ կրկնասեռ բային գուգահեռ միջին հայերենում հանդիպում են ձևային նոր տարբերակներ, անգամ լծորդական փոփոխակով, ինչպես՝ **յերկայնալ, յերկայնալ, յերկաննալ** բայերը՝ *երկարանալ* նշանակությամբ. *Չի յերկայնալ և ի հետ ծոյն ձգտի: Նշանն այն է, որ քաշվի ջղերն ու յերկայնալ: Որ ինքն կատարեալ յերկաննալ, և չի փոխի ի գունէն, յերկնալ* բայը՝ *երկար տևել և յերկրել* բայը՝ *երկարել* նշանակություններով. *Լաւն այն է, որ զայս չթողուն, որ յերկնալ: Եւ եր յերկրէ առողջին տալն ու յինի դահ, նայ առ իս այդ լաւ է (ՄՀԲ, 552):*

Նահատակել (նր-նահատակ դարձնել, չր-նահատակվել.) և **սխալել** (նր-պակասեցնել, չր-սխալվել) կրկնասեռ բայերի¹⁷ կողքին գործածվում են վերջիններիս միջինհայերենյան չեզոք սեռի տարբերակները՝ **նախատակիլ-չր-նախատակվել. Որ նախատակեցաւ ի Շամշուտի բերդն (ՄՀԲ, 563), սղալիլ-չր-սխալվել. Թագաւորն այն կու պիտի որ իւր ծառայն ոչ սղալի (ՄՀԲ, 705)** և այլն:

Գրաբարյան ձևը պահպանել, բայց բառիմաստային փոփոխություն է կրել **ծաղկել** բայը, գրաբարյան նր *ծաղկեցնել* և չր-ծաղիկ տալ իմաստները պահպանելով հանդերձ (*Նշանն տէրունեան ձրի մեզ զկեանքն ծաղկեաց զՔրիստոս (ՆՇՈ, 1003): Նախ ծաղկի և ապա առնու զպտուղն (ԳՏԳՀ, 721), Ահա եղև պայծառ զարուն, Ծաղկեաց այգին ու պտղանին (ՀԹՏ, 139))* ձեռք է բերել նաև ներգործական սեռի միանգամայն նոր նշանակություն՝ *ձեռագրելու ծաղկանկարել. Ծաղկեաց զաւետարանս և զիսագրեց (ՄՀԲ, 341):*

Ծփել գրաբարյան նշանակություններով գործածվող կրկնասեռ բային գուգահեռ¹⁸ միջին հայերենում գործածության մեջ է մտնում նաև **ծփել** նորակազմությունը՝ նր-քսել, շփել իմաստներով. *Ծփէ՝ բարկ քացախով (ՄՀԲ, 351)* և այլն:

Այսպիսով, գրաբարում կրկնասեռ շուրջ 40 բայեր շարունակում են գործածվել միջին հայերենում ինչպես գրաբարյան ձևաիմաստային կառուցվածքով, այնպես էլ միջինհայերենյան տարբերակներով:

Ձևային փոփոխությունները սովորաբար արտահայտվում են լծորդության, կազմության, հնչյունական մասնակի տարբերություններով, իսկ բառիմաստա-

¹⁶ **Յերկարել**-նր-երկարացնել. *Նոյնպէս և արդարութիւն երբեմն յերկարէ զկեանս որպէս առ եզնկիս (ԳՏԳՀ, 292), չր-երկարանալ... եւ յերկարեաց գործ պատերազմին հարուստ մի ժամ... (Արծր., 40):*

¹⁷ Բազում վկայա Քրիստոսի սպան և *նախատակեաց (Մարթին., ՆՀԲ, 403):* Եւ հարիւր քառասուն և չորք հազարքն՝ որք *նախատակեցան 'ի նեռնէն գորս յառաջն կնքեալ ստաց (ԳՏՈ, 318):* Չթիւ երկնատրսց դատուն սխալեցին (ՆԼ, տո., 718): Այս մի անգամ *սխալեցալ, Ահեղ ծով, եւ պանդուխտ եմ, զքեզ արայեմ, ինձ ողորմես՝ (ՀՄՊՏ, 62):*

¹⁸ Ծփել-նր-ծփացնել. *Անգգա ծփէ զմարմինն 'ի մէջ արեաց զանազան ախտից (ՆԼ տո., 1029), չր-ծփալ. Վասն այրոց որ ի մէջ արեաց մեղաց ծփին (ԳՏՔԱ, 99):*

յին փոփոխությունները բնութագրվում են իմաստային նոր առումներով, ընդ որում, իմաստափոխությունը արտահայտվում է գրաբարյան բառերի բազմիմաստության վերացմամբ:

Ինչպես ցույց է տալիս քննությունը, միջին հայերենը ընդունում է կրկնասեռ բայի գրաբարյան տարբերակը, որոշ դեպքերում զուգահեռաբար գործածում միջինհայերենյան ձևային կամ իմաստային նորակազմությունը՝ ստեղծելով մրցակցության հնարավորություն բայերի հին և նոր տարբերակների միջև: Սովորաբար այդ նոր տարբերակը նաև կրկնասեռ չէ, օրինակ՝ վերոհիշյալ 40 բայերից կրկնասեռություն ունի մոտ 15 բայ: Մյուս դեպքերում գործ ունենք կրկնասեռության չեզոքացման հետ¹⁹:

Քննության արդյունքները ներկայացնենք աղյուսակով.

	ԳՐԱԲԱՐ	ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ	ԳՐԱԲԱՐ	ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ
	Փոխել է ձևը կամ իմաստը, պահպանել է կրկնասեռությունը		Փոխել է ձևը կամ իմաստը, չի պահպանել կրկնասեռությունը	
1	անյուսանալ	անկուսել/իլ	հատանել	հատնիլ-չք
2	երկիրպագանել	երկրպագել	բղխել	բխալ-չք
3	հաւասարել	հաւարել	փայլել	փայլալ-չք
4	շաղել	շաղղել	կանգնել	կայնել-չք
5	սգալ	սքալ	վառել	վառենալ-չք
6	վայելել	վայրել	հաշտել	հաշտենալ-չք
7	օգտել	օկտել	սատակել	սատկիլ-չք
8	թքանել	թքնել, թքնուլ	հաճել	հաճենալ-չք
9	կարդալ	կարդել	արշավել	արշաւալիլ-չք
10	շնչել	շնչալ	մոտենալ	մօտեւորնալ-չք
11	սովորել	սորվել	ցամաքել	ցամքել-չք
12	բրդել	բրտել	յերկարիլ	յերկննալ-չք յերկրել
13.			լանդգնել	անտգնիլ-չք
14.			լաջողել	աջողիլ-չք
15			բարբաջել	բարբաջիլ-չք
16			գրաղել	գրաղիլ-չք
17			սողոսկել	սողորկիլ-չք
18			պնդել	պնդնալ-չք
19			աղաչել	աղչել-չք
20			խորովել	խորւլիլ-նք
21			վճարել	վճառել-նք
22			հաւանել	հաւնենալ-նք
23			կանչել	կանչիլ-նք
24			նահատակել	նախատակիլ-չք
25			սխալել	սղալիլ-չք
26			հնազանդել	հնազանդիլ-չք
27				

¹⁹ 3 բայեր՝ խռովել, ծաղկել, ծփել, ձևային փոփոխություն չեն կրել, բայց ձևք են բերել միանգամայն նոր նշանակություններ, ընդ որում ծաղկել և ծփել բայերը պահպանել են կրկնասեռությունը:

Ինչպես վկայում է խնդրո առարկա բայերի ձևաիմաստային կառուցվածքների գրաքար - միջին հայերեն – արդի հայերեն համադրական քննությունը, այն բոլոր բայերը, որոնց միջինհայերենյան տարբերակները ունեն քերականական մեկ սեռ, կրկնասեռ չեն նաև արդի հայերենում (սովորաբար ունեն գրաբարյան ձևը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզուներն իրենց զարգացման ընթացքում ավելի պարզ են դառնում, և յուրաքանչյուր իմաստի համար ստեղծվում է հատուկ ձև, ակնհայտ է դառնում միջին հայերենի ունեցած դերը հայերենում բայական նոր ձևերի առաջացման, յուրաքանչյուր բայական ձևով քերականական որևէ կոնկրետ իմաստ արտահայտելու միտումի ամրացման և տարածման գործում, որը արտահայտվում է ոչ միայն բայաձևերի պարզեցմամբ և ներգործական, կրավորական ու չեզոք (ե լծ.) սեռերի ձևական անջատումով, այլ նաև համակարգային մեկ այլ փոփոխությամբ՝ կրկնասեռության չեզոքացմամբ. գրաբարյան կրկնասեռ բայի կողքին միջինհայերենյան քերականական մեկ սեռ ունեցող տարբերակի գործածությունը հայերենի բայական համակարգի պարզեցման ճանապարհներից մեկն է նախանշում, որի արդյունքն ակնհայտ է արդի հայերենում²⁰:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աղուես.** - Աղուեսագիրք, Արարեսայ Երեմիայ փարպապետէ արևելցոց, Յորթագիւղ, 1827:
Արծր. - Պատմություն տանն Արծրունեաց ի Թովմայ փարպապետէ Արծրունայ, Կ. Պոլիս, 1852:
ԳԲ - Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, Եր., 2000 :
ԳԺՏ - Աբեղյան Մ., Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ, Եր., 1940:
ԳՏՈ - Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեխորիկ, Կ. Պոլիս, 1746:
ԳՏԳՀ - Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1829:
ԳՏԲԱ - Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, Անտան հատոր Կ. Պոլիս, 1741:
ԿԳՊ - Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Եր., 1961 (բնագրային համաբարբառ):
ՀԳԲ - Հայ Դասական Քնարերգություն, Եր., 1986:
ՀՈՏ - Հովհաննես Թևուրացին եւ իւր տաղերը, Թիֆլիս, 1892 :
ՀՄՊՏ - Հայ միջնադարյան պանդխտության տաղեր, Եր., 1979:
ՄԳԱ - Առակք Մխիթարայ Գոշի, Վենետիկ, 1834:
ՄԳՂ - Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Եր. 1975:
ՄՀԲ - Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Միջին հայերենի բառարան, Եր., 2009:
ՄՀՁՄ - Մխիթարայ բժշկապետի Հերացոյ Ջերանց մխիթարություն, Վենետիկ, 1832:
ՆԼ, առ - Ատենաբանություն սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ, Վենետիկ, 1812:
ՆԾՄ - Ներսէս Ընդհայի, Ընտիր մատենագիրք, Վենետիկ, 1830:
ՆԾՅՈ - Ներսէս Ընդհայի, Յիսուս որդի, Վենետիկ, 1643:
ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1936–37:
ՆՔ - Նահապետ Զուշակ, Հարցուր և մեկ հայրեն, Եր., 1976:
ՊՅԿ - Պատմագրություն Յովհաննու կաթողիկոսի ամենայն հայոց, Երուսաղեմ, 1843:
ՊՏՈ - Պողոս Տաթևացի, Թուղթ ընդդէմ Թեոփիստեայ, Կ. Պոլիս, 1753:

²⁰ Այն, որն մենք գործ ունենք համակարգային փոփոխության և շարունակական գործընթացի հետ, վկայում են միջին հայերենում կրկնասեռ խնդրո առարկա բայերից հինգը՝ *անհուսանայ, հախաաղել, շարել, վայելել, լքել*, որոնք արդի հայերենում արդեն ունեն քերականական մեկ սեռ, այսինքն՝ դարձյալ ապրել են կրկնասեռության չեզոքացում:

HRANUSH ZAKYAN

*PhD, associate professor
gyumri state pedagogical institute
hmardoyan71@mail.ru*

THE OLD ARMENIAN HERITAGE OF DOUBLE VOICE VERBS IN MIDDLE ARMENIAN

SUMMARY

About 30 verbs out of 500 double voice verbs continue to be used in Middle Armenian with certain semantic changes. Form changes usually appear in sound changing, typical to Middle Armenian, they can also be expressed in verb ending and verb forming. While word-meaning changes are characterized with some new meanings, besides the meanings are limited: the main meaning is kept, the secondary and metaphoric meanings disappear. Middle Armenian variant isn't usually double voice either.

ГРАНУШ ЗАКЯН

*Кандидат филологических наук, доцент
Гюмрийский государственный педагогический институт
hmardoyan71@mail.ru*

НАСЛЕДИЕ ДРЕВНЕАРМЯНСКИХ ГЛАГОЛОВ ДВОЙСТВЕННОГО ЗАЛОГА В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

РЕЗЮМЕ

Из 500 глаголов двойственного залога древнеармянского языка, около 30 глаголов, имеющих семантические отличия, продолжают употребляться и в среднеармянском языке.

Видовые изменения обычно проявляются в вариантах слов древнеармянского языка:

Для среднеармянского же языка характерно звуковое изменение, которое может отражаться на сопряжении и структуре глагола. Так же может происходить частичное звуковое изменение. При семантическом изменении глагол принимает новое смысловое значение со смысловой ограниченностью, связанной главным образом с сохранением основного смысла и потерей второстепенного или переносного значения.